# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՀԲՄ-ԱՇՁԲ-1/19/1
## N 11/341-2019

ք. Երևան «19» 12 2019թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՆՈՐՏԵՔՍ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Վ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **էլեկտրականության բաշխման սարքերի էլեկտրական մոնտաժման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>5</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **<u>123 660 000 (մեկ հարյուր քսաներեք միլիոն վեց հարյուր վաթսուն հազար)</u>** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնից 25%-ը՝ **<u>30 915 000 (երեսուն միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար)</u>** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.1.2. Պայմանագրի գնի մնացած ՝ **<u>92 745 000 (իննսուներկու միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար)</u>** ՀՀ դրամ գումարի աշխատանքները կիրականացվեն սույն պայմանագրի 7.13 կետի համաձայն համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում

սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 18-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ ԱԱԾ** | **<<ՆՈՐՏԵՔՍ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ>> ՓԲԸ** |
| **Ք. Երևան, Նալբանդյան104** | **ք. Երևան, Վարդանանց փակ. 6, 403** |
| **ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն** | **Ամերիաբանկ ՓԲԸ** |
| **Հ/հ 900001089011** | **Հ/հ 1570060401230100** |
| **ՀՎՀՀ 01507079** | **ՀՎՀՀ 02648755** |
| **Տնօրենի տեղակալ** | **Գլխավոր տնօրեն** |
| **Ա. Հակոբյան** | **Վ. Պետրոսյան** |

Հավելված N 1
«19» 12 2019թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
Ճ11/341-2019

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Աշխատանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանումը և գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | |
| | | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | էլեկտրականության բաշխման սարքերի էլեկտրական մոնտաժման աշխատանքներ<br>45311149/502 | էլեկտրականության բաշխման սարքերի էլեկտրական մոնտաժման աշխատանքներ՝ համաձայն թերությունների ակտի /կցվում է***/ | Դրամ | 123660000 | 123660000 | 1 | ՀՀ Հարավ-Արևելյան սահմանում գտնվող ՀՀ ԱԱԾ ՍԶ սահմանապահ ուղեկալներ | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 180 օրացուցային օրվա ընթացքում |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱԱԾ
Ք. Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900001089011
ՀՎՀՀ 01507079
Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

**ԿԱՏԱՐՈՂ**

<<ՆՈՐՏԵՔՍ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ>> ՓԲԸ
ք. Երևան, Վարդանանց փակ. 6, 403
Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/հ 1570060401230100
ՀՎՀՀ 02648755
Գլխավոր տնօրեն

Վ. Պետրոսյան

## ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏ***

| Հ/հ | Աշխատանքի (ծառայության) անվանումը | Չափման միավորը | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | ԱՍ տիպի 35 մմ$^2$ կտրվածքի օդային գծերի ապամոնտաժում | կմ | 35 |
| 2 | Պտուտակային հորատում 400մմ տրամագծով հանույթի իրականացմամբ 2մ խորության | խ.մ. | 91,25 |
| 3 | Երկաթբետոնե CB-10,5-3,5 տիպի միջանկյալհենականգնակներիտեղակայում ՕԳ 6-10 կվ, միականգնակ՝1-4-րդ կարգիգրունտներում,չբնակեցվածտարածքում | հատ | 345 |
| 3,1 | ТМ 1 լայնակիտեղադրում | հատ | 345 |
| 3,2 | К-6 գլխադիրներիտեղադրում | հատ | 1035 |
| 3,3 | ШС 10-А բարձրլարմանմեկուսիչներիտեղադրում | հատ | 1035 |
| 3,4 | ПС-2 սեղմակներիտեղադրում | հատ | 345 |
| 3,5 | Х 1 խամութիտեղադրում | հատ | 345 |
| 3,6 | СШ-1 ճարմանդներըմեկուսիչներինամրացնողհաղորդալարիմոնտաժում D-3մմ | մետր | 3105 |
| 4 | Երկաթբետոնե CB-10,5-3,5 տիպիմիջանկյալհենականգնակներիտեղակայում ՕԳ մինչև 6-10կվ, միականգնակմեկ CB-105 դիմակալով՝ 1-4-րդ կարգիգրունտներում, չբնակեցվածտարածքում | հատ | 6 |
| 4,1 | ТМ 6 լայնակիտեղադրում | հատ | 6 |
| 4,2 | К-6 գլխադիրներիտեղադրում | հատ | 6 |
| 4,3 | ШС 10-А բարձրլարմանմեկուսիչներիտեղադրում | հատ | 6 |
| 4,4 | ПС-70-Д կախովիմեկուսիչներիտեղադրում | հատ | 36 |
| 4,5 | ПА-2 սեղմակներիտեղադրում | հատ | 18 |
| 4,6 | ПС-2 սեղմակներիտեղադրում | հատ | 12 |
| 4,7. | Х 1 խամութիտեղադրում | հատ | 6 |
| 4,8 | СШ-1 ճարմանդներըմեկուսիչներինամրացնողհաղորդալարիմոնտաժում D-3մմ | մետր | 18 |
| 4,9 | ОГ 2 գլխամասիտեղադրում | հատ | 12 |
| 4,10 | ОГ 5 գլխամասիտեղադրում | հատ | 6 |
| 4,11 | Б 5 հեղյուսիտեղադրում | հատ | 6 |
| 4,12 | У 1 բարձակիտեղադրում | հատ | 6 |
| 4,13 | НКК-1-1Б ձգովիսեղմակներիտեղադրում | հատ | 18 |
| 4,14 | У 1-7-16 մեկթարթայինականջիտեղադրում | հատ | 18 |
| 4,15 | (зп 1) շրջանակ D-10 մմտեղադրում | մետր | 13,2 |
| 4,16 | Հենակներիամրացմանխամութներիտեղադրում | լրակազմ | 6 |
| 5 | Երկաթբետոնե CB-10,5-3,5 տիպիվերջնամասայինհենականգնակներիտեղակայում ՕԳ մինչև 6-10կվ, միականգնակմեկ CB-105 դիմակալով՝ 1-4-րդ կարգիգրունտներում, չբնակեցվածտարածքում | հատ | 4 |
| 5,1 | ТМ 6 լայնակիտեղադրում | հատ | 4 |

| | | | |
|---|---|---|---|
| 5,2 | К-6 գլխադիրներիտեղադրում | հատ | 4 |
| 5,3 | ШС 10-А բարձրլարմանմեկուսիչներիտեղադրում | հատ | 24 |
| 5,4 | ПС-70-Д կախովիմեկուսիչներիտեղադրում | հատ | 4 |
| 5,5 | ПА-2 սեղմակներիտեղադրում | հատ | 12 |
| 5,6 | ПС-2 սեղմակներիտեղադրում | հատ | 8 |
| 5,7 | X 1 խամութիտեղադրում | հատ | 4 |
| 5,8 | СШ-1 ճարմանդներըմեկուսիչներինամրացնողիաղորդալարիմոնտաժում D-3մմ | մետր | 12 |
| 5,9 | ОГ 2 գլխամասիտեղադրում | հատ | 8 |
| 5,10 | ОГ 5 գլխամասիտեղադրում | հատ | 4 |
| 5,11 | Б 5 հեղյուսիտեղադրում | հատ | 4 |
| 5,12 | У 1 բարձակիտեղադրում | հատ | 4 |
| 5,13 | НКК-1-1Б ձգովիսեղմակներիտեղադրում | հատ | 12 |
| 5,14 | У 1-7-16 մեկթարթայինականջիտեղադրում | հատ | 12 |
| 5,15 | (зп 1) շրջանակ D-10 մմտեղադրում | մետր | 8,8 |
| 5,16 | Հենակներիամրացմանխամութներիտեղադրում | լրակազմ | 4 |
| 6 | Միացմանկետիցերկաթբետոնե СВ-10,5-3,5 տիպիհենականգնակիվրամիականգնակմեկ СВ-105 դիմակալիտեղադրում՝ 1-4-րդ կարգիգրունտներում, չբնակեցվածտարածքում | հատ | 1 |
| 6,1 | ТМ 3 լայնակիտեղադրում | հատ | 1 |
| 6,2 | ТМ 6 լայնակիտեղադրում | հատ | 1 |
| 6,3 | К-6 գլխադիրներիտեղադրում | հատ | 4 |
| 6,4 | ШС 10-А բարձրլարմանմեկուսիչներիտեղադրում | հատ | 4 |
| 6,5 | ПС-70-Д կախովիմեկուսիչներիտեղադրում | հատ | 6 |
| 6,6 | ПА-2 սեղմակներիտեղադրում | հատ | 4 |
| 6,7 | ПС-2 սեղմակներիտեղադրում | հատ | 2 |
| 6,8 | X 1 խամութիտեղադրում | հատ | 2 |
| 6,9 | СШ-1 ճարմանդներըմեկուսիչներինամրացնողիաղորդալարիմոնտաժում D-3մմ | մետր | 12 |
| 6,10 | СРС-7-17 ականջօղակիտեղադրում | հատ | 1 |
| 6,11 | У 1 բարձակիտեղադրում | հատ | 1 |
| 6,12 | НКК-1-1Б ձգովիսեղմակներիտեղադրում | հատ | 3 |
| 6,13 | У 1-7-16 մեկթարթայինականջիտեղադրում | հատ | 3 |
| 6,14 | (зп 1) շրջանակ D-10 մմտեղադրում | մետր | 1,87 |
| 6,15 | Հենակներիամրացմանխամութներիտեղադրում | լրակազմ | 1 |
| 7 | Երկաթբետոնե СВ-10,5-3,5 տիպի ՕԳ 6-10 կվ, հենականգնակներիամրացում 40-70մմ չափերիգլաքարեբազալտեխճով | խ.մ. | 62,05 |
| 8 | Օդայինգծերիէլեկտրական ԱՍ տիպի 35 մմ2 կտրվածքիհաղորդալարերիկախումմեկուսիչներիվրա, 6-10կվ լարում, չբնակեցվածտարածքում ГОСТ-839-80 | կմ / 3 հատհաղորդալար(կմ) | 19,2/ 57,6 |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Գրունտիմշակումմինչև 228կվտ (310ձ.ու) հզորությանբուլդոզերով, տեղափոխելովայնմինչև 10մ, 4 կարգիգրունտ | խ.մ. | 88 |
| 10 | Հողանցման 40*4 մմ (ГОСТ 103-76) հաղորդաշղթայիսարքվածքմեկէլեկտրոդիցերկարությունըմինչև 20մ, հորիզոնական 25*4 մմ (ГОСТ 103-76) հողակցմանհաղորդաթիթեղովերկարությունըմինչև 1մ, 5*50*50 մմ Լ-2,5 մ անկյունայինպողպատէլեկտրոդով (ГОСТ 8509-86) | լրակազմ | 366 |
| 11 | Հողանցմանհաղորդաշղթայիէլեկտրոդինեռակցվածկետերիմշակում և ներկումհակակոռոզիոններկով/սուրիկ/ | ք.մ. | 0,5 |
| 12 | Խրամուղիների և փոսորակներիետլիցքմինչև 59կվտ (80ձ.ու) հզորությանբուլդոզերով, տեղափոխելովմինչև 5մ, գրունտ 3 կարգ | խ.մ. | 88 |
| 13 | Պարպիչների 6-10կվ տեղակայումհենականգնակիվրա | լրակազմ | 356 |
| 14 | Երկաթբետոնե СВ-10,5-3,5 տիպիվերջնամասայինհենականգնակներիվրա ПРНЗ-10 տիպիշարժաբերովգծայինբաժանիչիտեղադրում | հատ | 4 |
| 14,1 | Գծայինզատիչարտաքինտեղակայմաներկյունակավորտեղադրում, հենականգնակիվրա, զատիչի՝ իրձեռքիշարժաբերանջատիչով, ուժեղացվածմեկուսապատվածտարբերակով РЛНД 1-10Б/ 630 Н տիպի ТУ 16-91 ИВЕЖ. 674212.003 տեխնիկականպայմաններինհամապատասխան | լրակազմ | 4 |
| 14,2 | Ф-200 Լ-2,75 (траверса под разъединитель) հեծանիտեղադրում | հատ | 8 |
| 14,3 | Ф-10 Լ-630 խամութիտեղադրում | հատ | 16 |
| 14,4 | Ф-12 Լ-930 խամութիտեղադրում | հատ | 8 |
| 14,5 | 25 մմխողովակ (ГОСТ 3262-75) Լ-5 մ | մետր | 20 |
| 14,6 | Ф-10 շրջանակիտեղադրում | մետր | 72 |
| 14,7 | СК-1 ճարմանդներիտեղադրում | հատ | 160 |
| 14,8 | К-6 գլխադիրներիտեղադրում | հատ | 8 |
| 14,9 | ШС 10-А բարձրլարմանմեկուսիչներիտեղադրում | հատ | 8 |
| 15,10 | КВ-22 կեռիտեղադրում | հատ | 8 |
| 15,11 | Մետաղ(տափօղակ, հեղյուս, պնդօղակ) | կգ | 34,72 |
| 15,12 | А2А-35 սեղմակներիտեղադրում | հատ | 24 |
| 15,13 | ПА-2 սեղմակներիտեղադրում | հատ | 24 |
| 15,14 | РА 3 շարժաբերիլիսեռիտեղադրում | հատ | 8 |
| 16 | КРН-III-10 բարձրլարմանվահանակներիհիմքիբետոնացում 2,5*1,5 մ h-30 սմ | խ.մ. | 1,5 |
| 16,1 | КРН-III-10(исполнение ТСН УХЛ ) բարձրլարմանվահանակի՝ համալրված (10 կվ ՄՍԽ գծայինյուղայինանջատիչ /ВМГ-10 շարժաբերով ПП-67/, НТМИ-10 լարմանտրանսֆորմատոր, ТЛМ-10-2 հոսանքիտրանսֆորմատոր, բարձրլարմանէլեկտրոնայինհաշվիչ), տեղադրում | լրակազմ | 2 |
| 16,2 | АСБ-10 3x70մմ² մալուխիմոնտաժում | մետր | 60 |

| | | | |
|---|---|---|---|
| 16,3 | АСБ-10 3x70մմ² մալուխիժապավենայինզրահիհանում | մետր | 10 |
| 16,4 | Եռաջիղ АСБ-10 3x70մմ² մալուխիծայրաբացում, լարումըմինչև 10կվ | հատ | 8 |
| 16,5 | 3КНТп-10-70/120 (КВТ) ծայրայինկցորդիչիամրակցումմալուխին, լարումըմինչև 10կվ | հատ | 8 |
| 16,6 | Ջիղի՝ մալուխների, միացումսեղմակներին, կտր. 70քմմ | հատ | 24 |
| 16,7 | Մալուխիզրահիհողանցմանմիացում | հատ | 4 |
| 16,8 | Վահանակիհողանցմանմիացում | հատ | 2 |
| 17 | Ցանկապատիտեղադրում 3*3մ h-1,7մ /ցանկապատըբաղկացած է 40*40մմ պողպատեանկյունակիշրջանակից, մետաղականցանցովպատված/ | հատ | 2 |
| 18 | Մետաղյադռնակիտեղադրում /դուռըբաղկացած է 40*40մմ պողպատեանկյունակիշրջանակից, մետաղականցանցովպատված/ | հատ | 2 |
| 19 | Ցանկապատիամրացում, հիմքերիբետոնացումցեմենտ-ավազեշաղախով 0,5 մ խորությամբ | խ.մ. | 0,12 |
| 20 | Ցանկապատի և դռնակներիներկում | ք.մ. | 30,6 |
| 21 | Կախովիկողպեքիտեղադրում | հատ | 2 |

Ծանոթություն՝ Գնային առաջարկ ներկայացնելիս՝ համաձայն սահմանված նորմերի, ըստ թերությունների ակտի նախատեսել օգտագործվող նյութական միջոցների, աշխատանքային ռեսուրսների և տեխնիկայի արժեքները:

*Հավելված N 2*
*« 19 » 12 2019թ. կնքված*
*ՀՏԱՎ/341-2019 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | |
| | | | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45311149/502 | էլեկտրականության բաշխման սարքերի էլեկտրական մոնտաժման աշխատանքներ | **30 915 000** | **30 915 000** |
| | | | *Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած* | |
| | | | **92 745 000** | |
| | | Ընդամենը | 123660000 | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ԱԱԾ**
**Ք. Երևան, Նալբանդյան104**
**ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/հ 900001089011**
**ՀՎՀՀ 01507079**
**Տնօրենի տեղակալ**

**Ա. Հակոբյան**

**ԿԱՏԱՐՈՂ**

**<<ՆՈՐՏԵՔՍ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ>> ՓԲԸ**
**ք. Երևան, Վարդանանց փակ. 6, 403**
**Ամերիաբանկ ՓԲԸ**

**Հ/հ 1570060401230100**
**ՀՎՀՀ 02648755**
**Գլխավոր տնօրեն**

**Վ. Պետրոսյան**

*Հավելված 3*
*«    »    20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ________________ | ________________ |
| գտնվելու վայրը ________ | գտնվելու վայրը ________ |
| հհ ________ | հհ ________ |
| հվհհ ________ | հվհհ ________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «        » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    »  «          » 20   թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ________________ | ________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ________________ | ________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«    » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
(Պատվիրատուի անունը) (Կատարողի անունը)
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________
ազգանուն, անուն

_______________________
ստորագրություն

AMERIABANK

19.12.2019թ.
O.AB.100.12CIB.PIED.0.11191.19

***Բենեֆիցիար՝***
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

## ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.11191.19
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՆՈՐՏԵՔՍ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք «Պետության կարիքների համար աշխատանքների կատարման» թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՀԲՄ-ԱՇՁԲ-1/19/1 պետական գնման պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 12,366,000.00 (տասներկու միլիոն երեք հարյուր վաթսունվեց հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Պահանջում՝ Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՀԲՄ-ԱՇՁԲ-1/19/1 Պայմանագրով Պրինցիպալի կողմից ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան 28 դեկտեմբերի 2020թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) N ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՀԲՄ-ԱՇՁԲ-1/19/1 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

6.3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ.՝ (374 10) 56 11 11
Ֆ.՝ (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info@ameriabank.am

HERE AND BEYOND

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար** **Սուրեն Քոչարյան**

Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո

8.3) Պայմանագրով նախատեսված 30,915,000.00 (երեսուն միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումարի կանխավճարը ամբողջությամբ չի մուտքագրվել Պրինցիպալի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 1570060401230100 դրամային հաշվեհամարին:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար** **Սուրեն Քոչարյան**

AMERIABANK

19.12.2019թ.
O.AB.100.12CIB.PIED.0.11192.19

*Բենեֆիցիար՝*
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

## ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.11192.19
(ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՆՈՐՏԵՔՍ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պրիցիպալ) միջև կնքվելիք «Պետության կարիքների համար աշխատանքների կատարման» թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՀԲՄ-ԱՇՁԲ-1/19/1 պետական գնման պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում Պայմանագրի ներքո Պրինցիպալի կողմից ստացված կանխավճարի դիմաց:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել մինչև 30,915,000.00 (երեսուն միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Պահանջում՝ Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բենեֆիցիարի կողմից Պրինցիպալի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում բացված թիվ 1570060401230100 դրամային հաշվեհամարին կանխավճարի գումարը՝ 30,915,000.00 (երեսուն միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով ամբողջությամբ մուտք լինելու օրը և գործում է մինչև թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ՀԲՄ-ԱՇՁԲ-1/19/1 Պայմանագրով Պրինցիպալի կողմից ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան 28 դեկտեմբերի 2020թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Ընդ որում, Պահանջում պետք է նշվի, թե Պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

6.3) սույն Երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
Հ.՝ (374 10) 56 11 11
Ֆ.՝ (374 10) 51 31 33
www.ameriabank.am
info@ameriabank.am

HERE AND BEYOND